«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **«Բնապահպանությունը որպես կրտսեր դպրոցականի կրթության և դաստիարակության ինտեգրված բաղադրիչ»**

Առարկան՝ «Դասվար»

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Հակոբյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

Երևան 2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն ---------- էջ 3-4

Գլուխ 1.Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարելավման գործոն:---- էջ 5

1.1 Ինտեգրված ուսուցման հիմնական տարրերը: ----------էջ 5-8

1.2 Ինչպե՞ս պատրաստել ինտեգրված դաս: ---------- էջ 8

Գլուխ 2. Բնապահպանական վերաբերմունքի ինտեգրումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով----------էջ 9-11

Գլուխ 3.Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացումը դպրոցականների ուսումնական և արտաուսումնական պարապմունքների ընթացքում---------- էջ 12

3.1 Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում իմ կողմից կազմակերպված ինտեգրված դաս-միջոցառման պլանավորումը: ---------- էջ 12-16

Եզրակացություն ---------- էջ 17-18

Օգտագործված գրականության ցանկ ---------- էջ 19

Հավելվածներ---------- էջ 20-23

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն

Թեմայի արդիականությունը.կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներն ու ձևերը առանցքային նշանակություն ունեն կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում:

Նմանատիպ վերլուծական աշխատանքները կնպաստեն կրթական ծրագրերում կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակությանը միջոցների և ձևերի նորացմանը:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, երկրում էկոլոգիական զարգացվածության ցածր մակարդակը՝ անհրաժեշտ է տարրական դպրոցում ուսումնասիրվող մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա, ես և շրջակա աշխարհը առարկաների ուսումնական ծրագրերում ներառել էկոլոգիական բովանդակությամբ թեմաներն ավելի խորությամբ, ուսումնասիրելու էկոլոգիական ժամանակակից խնդիրներ և դասընթացի ուսումնասիրությունը իրականացնել այնպիսի մեթոդներով և միջոցներով, որպեսզի արդյունվետ կերպով ձևավորվեն կրտսեր դպրոցականների էկոլոգիական գիտակցությունը, էկոլոգիական պատկերացումները, բնաճանաչողական կարողությունները, ինչը և կնպաստի նաև նրանց էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Երկրում իրականացվող կրթական ոլորտի բարեփոխումները ուղղված են առավել մրցունակ շրջանավարտներ ունենալուն, այդ համատեքստում տարրական դպրոցն ամենակարևոր օղակն է:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը և դրանում առկա տեսական դրույթների ու հայեցակարգային մոտեցումների հիման վրա առաջադրել և հիմնավորել կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներն ու ձևերը:

Աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը, տեսական դրույթներն ու հայեցակարգային մոտեցումները, հիմնավորել միջառարկայական կապերի դերը կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման գործում, հենվելով մեր մանկավարժական փորձի և թեմայի վերաբեյալ տեսակետների, կարծիքների գիտական մոտեցումների վրա՝ առաջադրել կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արդյունավետ ձևեր և միջոցներ:
- Փաստարկներ բերել ինտեգրված ուսումնական ծրագրի ներդրման կարևորության օգտին, մշակել և ներկայացնել ինտեգրված թեմատիկ միավորների օրինակներ, լուսաբանել դրանց իրականացմանը վերաբերող մեթոդական հարցերը:

Հետազոտական աշխատանքի խնդիրների լուծման համար օգտագործել ենք մանկավարժական հետազոտության հետևյալ մեթոդները՝

- Տեսական-բարձրացված խնդիրների լուծման համար գործառվում են գիտական ճանաչողության մեթոդները, ինչպիսիք են համեմատությունը,

վերլուծությունը, համադրումը, ընդհանրացումը, դասակարգումն ու համակարգումը, ինչպես նաև լուսաբանումը օրինակների միջոցով:

- Էմպիրիկ-դիտում, զրույց, հարցազրույց, մանկավարժական փորձարարության արդյունքների վիճակագրական մշակում:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը կազմում է համակարգչային 23 էջ:

Ակնհայտ է, որ II-IV դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրության, կենսաբանության, էկոլոգիայի, հասարակագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի, սոցիոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Հարցադրումներ.

- Նպաստո՞ւմ է արդյոք, «Ես և շրջակա աշխարհը» առարկան սովորողների էկոլոգիական գիտելիքների յուրացմանը և հարստացմանը՝որպես ինտեգրված բաղադրիչ:
- Ինչպիսի՞ միջառարկայական կապեր են ստեղծվում տարրական դպրոցում՝ որպես կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արդյունավետության ապահովման միջոց:
- Որքանո՞վ է «Ես և շրջակա աշխարհը» առարկան հնարավորություն տալիս ուսուցչին լուծելու էկոլոգիական դաստիարակության խնդիրները և կրթության ինտեգրված մոտեցումները:

Գլուխ 1.Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարելավման գործոն:

Մարդկության գոյության ողջ պատմության ընթացքում մասնագետների կողմից մշակվել և առաջադրվել են շրջակա միջավայրի ճանաչման բազմաթիվ եղանակներ, նրա առանձնահատկությունների բացահայտման սկզբունքներ ու մոտեցումներ:

Անառարկելի է, որ մարդն ի սկզբանե կենդանի էակ է, բնության գոյության ձևերից մեկը, սակայն ապահով և անվտանգ կենսագործունեության համար նա բնության ներսում ստեղծել է ինքնատիպ մշակույթի արհեստական աշխարհ՝ «երկրորդ բնություն»: Ինտեգրված ուսուցման վերաբերյալ դեռ իրենց ժամանակին գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներ՝ Յ. Ա. Կոմենսկին,Յ. Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե միջառարկայական կապերի կիրառումը, թե բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները: Ինչպես նշում է Ե. Ա.Եկժանովան, «Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող,դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում» [4, էջ 52]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ. Վ. Վ. Կրաևսկու,դպրոցականների առաջադիմության անկումը գլոբալ խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում, ընդ որում՝ ոչ միայն մանկավարժական [1, էջ 93], պետք նշենք, որ ավելի է կարևորվում ինտեգրված ուսուցման կիրառումը՝ որպես կրթության որակի բարձրացման գործընթացում: Համաձայնելով նաև Վ. Վ. Կրաևսկու այն տեսակետին, ըստ որի՝ այս խնդրի լուծումը բազմաշերտ է և պահանջում է տարբեր մասնագետների՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների միջամտությունը, անդրադառնանք զարգացնող ուսուցման նշանակությանը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

1.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

- Ներգրավելով օգնականներին, ուսուցիչներին կամ մասնագետներ, ովքեր կաջակցեն ուսուցիչներին նախատեսված պահանջներն ու կարիքները սովորողների համար մատչելի դարձնելու, աշխատում են ամբողջ խմբով:
- Հարմարեցված ուսումնական ծրագիրը երեխաների համար հատուկ կրթական կարիքներ ունեցող,
- Ծնողական ներգրավվածությունը: Բոլոր դպրոցները ձգտում են որոշակի մակարդակի մասնակցություն ծնողների, բայց հաճախ դա սահմանափակվում է հանդիպումներով եռամսյակը մեկ:

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը:Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Իհարկե, ինտեգրված դասերը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում ,հետաքրքիր ու բովանդականլից են դարձնում ուսումնական գործընթացը: Ինտեգրացված դասերը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ: Որո՞նք են ինտեգրված դասի առավելությունները, և պե՞տք է այսօր սովորողին դասաժամի այդ ձևը: «Ինտեգրում բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ գագաթը՝ նպատակային դասը:

Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում: Կարող եմ իմ սեփական փորձից մեջբերել օրինակներ. տարբեր նախագծեր արվել են հենց ինտեգրված դասապրոցեսների միջոցով: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը:

Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Ինտեգրացված դասը սովորաբար նախապես պլանավորվում է : Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին, պատրաստակամություն է այլընտրանքային դասի: Հաճախ դրանք դասեր են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման: Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ:

Տարրական դպրոցի երեխաների մոտ բնության նկատմամբ հոգատարություն, սեր, ուշադրություն ձևավորելու համար անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ, դասեր և արտադասարանական միջոցառումներ: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման ժամանակ պետք է կապ ստեղծել մեր ժամանակներում և մեր հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի հարցերի միջև: Երեխաները կկարողանան սովորել բնության մեջ վարքի տարրական կանոնները: Դասերի ժամանակ տարվող աշխատանքները իրենց արտացոլումն են գտնում արտաուսումնական միջոցառումներում՝ բնական նյութերից ձեռքի աշխատանքների պատրաստում, բնության մասին նկարների ստեղծում, բերքի, ծաղկի տոների կազմակերպում և այլն: Աշխատանքում օգտագործվում են մայրենիի, հայոց լեզվի վարժություններ, մաթեմատիկայի խնդիրներ, կերպարվեստի առաջադրանքներ:

Օրինակ՝ առաջին

Վարդը որոշեց մայրիկի ծննդյան օրը նրան նվիրել աստղածաղիկներ, իսկ նրա քույրիկը՝ Շուշանը, որոշեց նվիրել շուշաններ:Վարդը նվիրեց 7 վարդ, իսկ Շուշանը 5 շուշան: Քա՞նի ծաղիկներ նվիրեցին մայրիկին քույրիկները միասին:

Օրինակ՝երկրորդ

Պուրակում կար 15 եղևնի, ծառատունկի ժամանակ երեխաները տնկեցին ևս 8- ը : Քա՞նի եղևնի կաճի պուրակում:

Այս առարկաները երեխային իրական կյանքի հետ կապելու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում.

- Աստղերի վերաբերյալ թվային տվյալներ
- Ճանապարհորդության ժամանակը և արագություն
- Բնապահպանության օրինակներ թվերի լեզվով

Դասագրքում կան այնպիսի առաջադրանքներ, որոնք ապահովում են միջառարկայական կապերը և զարգացնում գրավոր խոսքը: Դրանք իրականացվում են հետևյալ առաջադրանքները իրականացնելով՝

- Գրել պատմվածքներ բնության, սիրած կենդանու, թռչունների մասին;
- Գրել պատմվածքներ և հեքիաթներ տարվա եղանակների մասին:
- Մշակել ազգային առասպելներ:
- Ընթերցել մոլորակներին նվիրված բանաստեղծություններ ու պատմվածքներ:
- Ունենալ տիեզերական և էկոլոգիական հասկացությունների բառատետրեր:

Բանավոր խոսքով ներկայացնել եհտևյալ առաջադրանքները՝

- Հասկացությունների ընդլայնում « կենդանիների աշխարհում»:
- Բացահայտել բնավորության այն գիծը, որը հատուկ է մարդկանց և կենդանիներին:
- Նկարագրել ծանոթ թռչուններին, միջատներին, օգտագործելով գեղարվեստական բառեր ու արտահայտություններ, ասացվածքներ, հանելուկներ:
- Պատմել դեպքեր մարդկանց և կենդանիների բարեկամության մասին:
- Նկարելով բնության որևէ տեսարան, հորինել պատմվածք նկարի վերաբերյալ:

1.2 Ինչպե՞ս պատրաստել ինտեգրված դաս:

Նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով: Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Իմ կարծիքով, պետք է կանխատեսել նաև բոլոր հնարավոր ընդհատումները՝ կապված տեսողական և բաժանվող նյութերի, սարքավորումների և քարտերի մուլտիմեդիայի ոստայնում: Բայց քանի որ աշխատում է երկու դասավանդող, նույնիսկ, եթե ինչ-որ պահի առաջատար դեր խաղացել է նրանցից մեկը, երկրորդը չպետք է նստի ստվերում. նա ևս պետք է ակտիվ լինի՝ վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը: Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել

հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում:
Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մի կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին: ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում,որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:

Գլուխ 2. Բնապահպանական վերաբերմունքի ինտեգրումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով:

«Բնությունը այնպես է հոգացել ամեն ինչի մասին,
որ ամենուր կարող ես գտնել սովորելու ինչ-որ բան»:
Լեոնարդո Դա Վինչի

Տարրական դպրոցում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք բնության, մարդկանց, շրջակա միջավայրի նկատմամբ, տարրական գիտելիքներ հաղորդել բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ: Առարկայի բովանդակային բաղադրիչներն ընձեռում են նրա ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, դասընթացի յուրացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների մշակման հնարավորություն:

Տարրական դասարաններում վերջին տասնամյակում ներդրվել է նոր առարկա՝ «Ես և շրջակա աշխարհը», որտեղ բացի բնությունից ներառված են աշխարհաճանաչողության տարբեր բնագավառի տարրական գիտելիքներ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան կոչված է ապահովելու հանրակրթական դպրոցի հետագա աստիճաններում սովորողների առավել հիմնարար գիտելիքները հումանիտար, բնագիտական առարկաներից: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում հարկավոր է ստեղծել այն հիմքերը, որոնք հետագայում արդյունավետ կդարձնեն ուսուցումը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի մեկ այլ կարևոր առանձնահատկությունն էլ սոցիալական հմտությունների խթանումն է, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և վարքագծի ձևավորումը:

«Ես և շրջակա աշխարհը» դասագիրքը փորձում է նաև հասցեագրել մարդկային փոխհարաբերությունների խնդիրները, ինչպես նաև սովորեցնում է երեխաների իրավունքներն ու պարտականությունները:

Հենց սա է ինտեգրված մոտեցումը:

Հարկավոր է տեսնել դպրոցներում առկա ռեսուրսները, որոնք կարելի է օգտագործել երեխաների մոտ շրջակա միջավայրի նկատմամբ հատուկ մոտեցում և վերաբերմունք ձևավորելու համար:

Դպրոցների բակերում բավականաչափ մեծ անխնամ հողակտորներ կան, որոնք կարելի է օգտագործել բուսաբանական-բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար: Դա կօգնի երեխաներին ճանաչել բնությունը, նրանց մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ: Տարրական և միջին դասարանի երեխաները պետք է սովորեն բույսերի մշակում, այգու խնամք: Երեխաների աշխարհաճանաչողության ձգտումն ու հետաքրքրասիրությունը հաշվի առնելով՝ սա կարող է դառնալ շատ հաճելի զբաղմունք նրանց համար:

Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառացած խնդիրներին:

Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելուն:

Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետ զրույցների, փաստերի համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն ներկայացնելը: Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները: Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիայի պրեզենտացիաների շնորհիվ:

Ուստի դասվարը պետք է ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին՝ կարևորելով ժամանակակից մոտեցումներով այն արդյունավետ կազմակերպելու գործընթացը: Դեռևս մանկուց երեխաներին պետք է սովորեցնենք բնության օրինաչափությունները ճանաչելու և բնության հետ ներդաշնակ ապրելու արվեստը: Հենց դրան է միտված արդյունավետ և ուսանելի դասերի կազմակերպումն ու այդ դասերի միջոցով աշակերտներին բնության և շրջակա միջավայրի, դրա պահպանության և դրա նկատմամբ հարգանքի ձևավորման վերաբերյալ լրացուցիչ գիտելիքներ և հմտություններ հաղորդելը: Նման դասերի օրինակ կարող են հանդիսանալ նաև դասվարների կողմից կազմակերպվող դաստիարակչական աշխատանքները, որի մի նմուշի էլ կծանոթանանք ստորև:

ԳԼՈՒԽ 3. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և ԱՐՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կրտսեր դպրոցական տարիքը կապված է տարրական դասարաններում կրտսեր դպրոցականների ուսուցման և դաստիարակության հետ: Ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի կողմից դպրոցականների տարիքային հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ: Հույն փիլիսոփա Արիստոտելը առաջին մանկավարժական փորձն է կատարել տարիքային պարբերացում սահմանելու ուղղությամբ: Կրտսեր դպրոցականների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները բնութագրել են նաև Գրիգոր Տաթևացին, Յան Ամոս Կոմենսկին, Ժան-Ժակ Ռուսոն և այլ:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման ոչ ավանդական ուսուցման կազմակերպման ձևերի թվում են էկոլոգիական խաղերը, թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Տարվա եղանակները», «Ծառատունկ», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումները, բնաճանաչողական մրցույթները): Այսպիսի միջոցառումները սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության, շրջապատող միջավայրի նկատմամբ, երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները կարելի է համադրել ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, դպրոցամերձ հողամասում եղած ծառերն ու թփերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները:

3.1 Բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում իմ կողմից կազմակերպված ինտեգրված դաս-միջոցառման պլանավորումը:

Թեմա – Շրջակա միջավայրի պահպանություն

Նպատակ – Օգնել գիտակցել, որ շրջակա միջավայրի աղտոտվածությունը վնաս է հասցնում բնությանը: Ներմուծել վերամշակման գաղափարը:

Խնդիրներ – Արտադրական թափոնների ռացիոնալ օգտագործում:

Միջոցառումը սկսվում է Աստծո կողմից աշխարհի արարման պատկերումով.

- Վաղուց, շատ վաղուց աշխարհը խավարի մեջ էր: Աստված ստեղծեց լույսը և այն բաժանեց խավարից: Նա լույսը կոչեց ցերեկ, խավարը՝ գիշեր: Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը՝ ցամաքն ու ծովերը: Նա ցամաքը բաժանեց ջրերից և պատեց զարմանահրաշ և բազմագույն ծաղիկներով, ծառերով և

բույսերով: Աստված ստեղծեց արևը, լուսինը և աստղերը, որպեսզի նրանք լուսավորեն երկիրը և ցույց տան ժամանակը: Ցերեկն արևն էր փայլում, իսկ գիշերը լուսավորում էին աստղերն ու լուսինը: Այնուհետև Աստված ստեղծեց ջրային կենդանիներին ու թռչուններին, հետո՝ սողուններին ու ցամաքային կենդանիներին: Աստված տեսավ, որ այս ամենը գեղեցիկ ու բարի է: Նա այս ամենն արարեց հինգ օրում: Վեցերորդ օրը աստված ստեղծեց մարդուն: Ամբողջ տիեզերքը ստեղծելուց հետո Աստված յոթերորդ օրը հանգստացավ:

- Այս զարմանահրաշ աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, գոյություն ունի շատ վաղուց: Աշխարհի արարման մասին մեզ պատմում է Սուրբ գիրքը՝ Աստվածաշունչ մատյանը: Երկիրը, արևը, լուսինը, աստղերը, ծովերն ու գետերը, ծառերն ու ծաղիկները և ամեն, ամեն ինչ Աստծո նվերն են մեզ: Աստված արարեց այս գեղեցիկ աշխարհը մեզ համար:
- 2009թ. ՄԱԿ-ը ապրիլի 22-ը պաշտոնապես հռչակեց Մոլորակի օր: Ամեն տարի այս օրը նշվում է աշխարհի ավելի քան 175 երկրներում և մասնակցում են 500 միլիոնից ավելի մարդիկ: Բնության նկատմամբ մարդկանց վերաբերմունքի արմատական փոփոխությունը այսօր դարձել է ժամանակի հրամայականը: Ճանաչե՛նք բնության օրինաչափությունները և սովորենք բնության հետ ներդաշնակ ապրելու արվեստը: Միանա՛նք աշխարհին, փորձենք պաշտպանել Հայաստանի գեղեցիկ բնությունը:

Սկսվում է **«Կար-չկար մի քաղաք կար» պատմվածքի** ընթերցումը ուսուցչի կողմից, որը նախապես նկարահանվել էր փոքրիկ տեսահոլովակով: Այնուհետև «փոքրիկ դերասանները» բեմականացնում են «Աղբն ո՞վ թափեց» ներկայացումը՝ ըստ Գագա Նախուցրիշվիլիի համանուն սցենարի («Հանդուրժողականության ուսուցում» դասղեկի ձեռնարկ, Երևան 2008, Նունե Թորոսյան, Լուսինե Ալեքսանյան, Նարինե Մնացականյան):

Բեմադրության ժամանակ փոքրիկները մեկը մյուսի հետևից գալիս են բակ, որտեղ աղբի մի մեծ կույտ էր հայտնվել: Նրանք զարմանքով նայում են, բարկանում այն անշնորհք մարդկանց վրա, ովքեր թափել են այդ աղբը և ստեղծել մեծ աղբակույտը: Հետո, երբ պարզվում է, որ այդ մեծ աղբակույտը իրենցից յուրաքանչյուրի թափածից է առաջացել (ինչպես «Կար-չկար մի քաղաք կար» պատմվածքի «Փոքր» քաղաքի բնակիչներն էին անում), ամեն անգամ մտածել են՝ մի փոքր աղբից ի՞նչ վնաս: Բայց երբ նրանք հասկացան, որ այդ աղբակույտը իրենց ստեղծածն էր, գործի անցան: Սկսեցին հավաքել բակը, մաքրել, կարգի բերել, աղբը լցնել աղբարկղերը և հեռացնել բակից: Նրանք խոստացան, որ էլ երբեք այդպիսի բան չեն անի. չէ՞ որ դրա համար հատուկ աղբամաններ կան:

- Էկո- ***Հարց 1***. Թվարկենք, թե ինչպիսի աղբ ենք հաճախ տեսնում մեր շուրջը:

Պատասխան – Թուղթ, թիթեղյա տուփեր, պոլիէթիլենային տոպրակներ, շշեր, ապակի, ուտելիքի մնացորդներ և այլն:

Հարց 2. Փորձենք ուղիներ փնտրել, թե ինչպես կարելի է նվազեցնել շրջապատի աղտոտվածությունը :

Պատասխան – 1. Կարելի է տան, դպրոցի շրջակայքում աղբահանություն կազմակեպել:

2. Կարելի է լրացուցիչ աղբարկղեր տեղադրել:

3. Կարելի է հետևել, որ աղբն աղբարկղերը թափվի, այլ ոչ՝ ուր պատահի:

4. Կարելի է ցուցանակ փակցնել՝ **«Այստեղ աղբ չթափե՛լ»** և այլն:

- «Մի փոքրիկ քաղաքի կենտրոնական զբոսայգում մի հրաշք խաղալիք կա: Հսկայական խոզուկ է՝ մեջքին բացվածքով: Հնեց որ բացվածքի մեջ որևէ բան ես գցում, խոզուկն սկսում է երգել ու պարել: Խոզուկը զբոսայգում խաղացող երեխաների սիրելին է»:
- «Բելգիայում է ամենամաքուր այգին, որտեղ չես տեսնի անգամ թղթի կտոր: Այնտեղ պատրաստվել է ծիծաղելի հաստլիկ տղամարդու տեսքով մի աղբաման, որի բերանը լայն բացված է: Աղբը գցելով հաստլիկի բերանի մեջ՝ նա բարձր ձայնով շնորհակալություն է հայտնում և քաղցրավենիք է տալիս յուրաքանչյուրին, ով օգտվում է իր աղբամանից: Երեխաների ոգևորությունը անչափ է: Նրանք գետնից վերցնում են ամենափոքր թուղթն անգամ, որպեսզի «կերակրեն» ժպտադեմ հաստլիկին»:
- Էկո – ***Հարց 3.*** Կա՞ն բաներ, որոնք դեն գցելու փոխարեն կարելի է նորից, կամ այլ բանի համար օգտագործել:

  Պատասխան - ● Որոշ նյութեր, օրինակ՝ թուղթը, մետաղը, ապակին, պլաստմասսան, դեն նետելու փոխարեն հնարավոր է մշակել և նորից օգտագործել:

● Այս կերպ մի կողմից կրճատվում է աղբի քանակը, մյուս կողմից խնայվում են բնական պաշարները:

●Մենք օգտագործել ենք որոշ թափոններ և պատրաստել հետաքրքիր իրեր: Ստեղծել ենք ***«Օգնենք երկրին»*** ցուցահանդեսը:

●Յոթ չափենք, մեկ թափենք:

Ծնողների և աշակերտների ջանքերով ստեղծել էին «Օգնենք Երկրին» ցուցահանդեսը, որտեղ բնական և արհեստական նյութերը, թափոնները կյանք էին առել և դարձել ծաղկանոց, ծաղկաման, պոլիէթիլենե տոպրակների մնացորդները դարձել էին աղջիկ, պարտեզ և այլն:

Աշակերտները ըստ խմբերի ներկայացնում են և պատմում հողի, օդի, ջրի կարևոր հատկությունները, նշում, որ դրանք նույնպես ենթակա են աղտոտման:

Օրինակ ՝ որ ջրի նման նա մաքուր լինի,

Որ ջրի նման նա երկար ապրի…

- Եվ առ այսօր ջուր մատուցող աղջնակի, հարսի ու պատանու լսելիքն է շոյում ավանդական խոսքը. «Ջրի պես երկար կյանք ունենաս», «Ջրի պես արևդ երկար լինի»:
- Անմահական ջուր, որի արժեքը ժողովուրդը բնորոշել է հետևյալ իմաստուն ասացվածքներով՝ «Երկու ջուրը՝ մի հաց է»:
- «Խմածդ ջրին քար մի՛ գցիր»:
- «Ջուրը կյանքի հիմքն է»:
- «Ջուրը հպարտություն է, պետք է խնայել այն»:
- «Ջրով են բացվում ծաղիկները, և ծիածաններն են գեղեցկացնում աշխարհը»:
- «Ջրով են սնվում ամպերը և անձրև են պարգևում պապակած հողին»:
- «Ջուրը էլեկտրականություն է, արդյունաբերություն, երկրի հզորությունը»:

- «Խոնարհ եղի՛ր ջրի պես, կտրուկ եղի՛ր թրի պես»:
- «Ձուրը՝ փոքրին, խոսքը՝ մեծին»:
- «Կաթ-կաթ ջուրը քար կծակի»:
- Մայրական կաթի նման քաղցր է սառնորակ գետակների ջուրը, երևի այն պատճառով, որ մարդու յոթ տասներորդ մասը ջրային կազմություն է:
- Բազմաթիվ են, յուրօրինակ քարի հուշարձանները: Բայց կժով ջուր վաճառող նիհարիկ տղայի արձանը Երևանում միակն է: Քանզի դա հուշարձան է՝ ջրին:

Ամփոփելով նյութը՝ աշակերտները նշեցին, որ Երկիր մոլորակը իրենց տունն է, որը պետք է սիրեն և խնամքով վերաբերվեն նրան: Նրանք նշեցին.

1. Ծառ տնկի՛ր:
2. Առանց անհրաժեշտության միացրած մի՛ թող լույսը, համակարգիչը:
3. Խանութ գնալիս քո՛ տոպրակը վերցրու:
4. Ծորակի ջուրը բաց մի՛ թող: Մոլորակի ջրի պաշարներն անսպառ չեն:
5. Վերամշակի՛ր, վերօգտագործի՛ր:

Երգ - **«Պայծառ արեգակը»,«Նկարեցի այս երկիրը»:**

Տեղին է մեջբերել Լեոնարդո դա Վինչիի խոսքը, թե երկաթը ժանգոտում է իր համար կիրառություն չգտնելով, լճացած ջուրը նեխում կամ ցրտից սառչում,իսկ մարդու միտքը խամրում է՝ կիրառություն չգտնելով: Հետևաբար, ինչպես նշել է Մակարենկոն «Դասվարը պետք է ունենա սանի առողջության պատկերը, միշտ իմանա, թե ինչ ուղղությամբ է շարժվում նրա բնավորությունը, ի՞նչ հետաքրքրություններ ու հակումներ, տաղանդներ և ընդունակություններ ունի նա և ո՞րն է անհրաժեշտ զարգացնել»: Ուստի միջոցառումների ժամանակ պետք է առաջատարները և կազմակերպիչներն՝ աշակերտները լինեն ու պատասխանատու զգան համապատասխան աշխատանքը նպատակամետ, անթերի կատարելու համար:

Հաճախակի կատարվող արտադասարանական միջոցառումներն շատ են օգնում աշակերտներին ինքնաարտահայտման, ինքնադրսևորման հարցերում, եթե վերջիններս անմիջապես մասնակցում են տվյալ միջոցառման և՛ թեմայի ընտրությանը, և՛ միջոցառման անցկացմանը, իսկ ուսուցիչները ընդամենը ուղղորդում են նրանց և արդյունքում ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին:

Ե զ ր ա կ ա ց ու թ յ ու ն

Դասվարի մանկավարժական հմտությունները կարևոր և նշանակալից դեր ունեն նրա աշխատաոճում: Նա իր աշխատանքի ուրույն ձևերով ու մեթոդներով պետք է ձեռք բերի կրտսեր դպրոցականների վստահությունը, հավատը, աշխատանքի հանդեպ սերը, նվիրումը:

Երկիցս ճշմարիտ է Էռնեստ Հեմինգուեյի այն միտքը, թե մարդը մեծ հրաշալիք է: Կարելի է ավելացնել, որ ուսուցիչն է ամենամեծ հրաշալիքը, որի անձեռակերտ առհավատչյաներն են սերնդափոխության հերթագայությամբ մարդկությանը ներկայացված տիտաններն ու հանճարները:

- Ուրեմն դասվարը պետք է կարողանա ուղիներ, միջոցներ փնտրել, ստեղծագործական հմտություններ կիրառել, որպեսզի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ցանկացած թեմա, դասանյութ մատուցվի ժամանակակից, արդի մոտեցումներով՝ այն գրավիչ, տպավորիչ, ուսանելի դարձնելու, հետագայում առօրյայում կիրառություն գտնելու ակնկալիքով:
- Յուրաքանչյուր պետության կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կայացած հասարակություն, իսկ հասարակության կայացման լավագույն գործիքը դպրոցն է: Ժամանակակից աշխարհում, երբ օրեցօր մեծանում է հասարակության կայացման ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը:
- Կրտսեր դպրոցականները էկոլոգիայի մասին հիմնական տեղեկություն ստանում են առարկան ուսումնասիրելիս:
- Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել որոշ սկզբունքներ, ելակետային դրույթներ, նորմատիվային մի շարք պահանջներ, որոնք համապատասխանում են հասարակության, գիտության զարգացման մակարդակին:
- Էկոլոգիական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ:

Իմ կողմից իրականացրած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում կատարել եմ մի շարք հետևություններ, մասնավորապես՝ Հանրակրթական դպրոցներում ուսուցանվող <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան նպաստում է աշակերտների էկոլոգիական դաստիարակությանը:

Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է ինտեգրատիվ, միջառարկայական բնույթը պահանջող, աշխարհայացքային նշանակություն ունեցող,

գիտելիքների և բարոյականային աշխատանքային որակների բարդ համակարգը, որը ենթադրում է էկոլոգիական դաստիարակության ճկուն ձևերի մշակում՝ միջառարկայականության հիմքի վրա:

Տարրական դպրոցի մանկավարժները գտնում են, որ գոնե յուրաքանչյուր ամիսը մեկ պետք է կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, քանի որ դրանց դպրոցականները ներգրավվում են կամավորության սկզբունքով՝ ստեղծագործական մեծ ակտիվություն ցուցաբերելով:

Ամփոփելով վերը շարադրածը կատարել եմ մի շարք եզրահանգումներ.

- յուրաքանչյուր պետության կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կայացած հասարակություն, իսկ հասարակության կայացման լավագույն գործիքը դպրոցն է: Ժամանակակից աշխարհում, երբ օրեցօր մեծանում է հասարակության կայացման ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը,
- կրտսեր դպրոցականները էկոլոգիայի մասին հիմնական տեղեկություն ստանում են առարկան ուսումնասիրելիս,
- տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել որոշ սկզբունքներ, ելակետային դրույթներ, նորմատիվային մի շարք պահանջներ, որոնք համապատասխանում են հասարակության, գիտության զարգացման մակարդակին:

Օգտագործված գրականության ցանկ և ինտերնետային ռեսուրսներ

1.Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ.Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը. Եր. Զանգակ- 97:

2.Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010

3.«Հանդուրժողականության ուսուցում» դասղեկի ձեռնարկ, Երևան 2008, Նունե Թորոսյան, Լուսինե Ալեքսանյան, Նարինե Մնացականյան:

4. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Текст предоставлен правообладателем http://www.litres.ru Основы интегрированного обучения : пособие для вузов / Е. А. Екжанова, Е. В. Резникова: Дрофа. Москва. 2008- ISBN 978-5-358-0465-1-210.

5.http://blognews.am/arm/news/91275/ekologiakan-khndirner-usumnakan

6.Տարրական դպրոցի <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի չափորոշիչ և ծրագիր(2-4դասարաններ),2008

7.Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ն. Զ., «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարիկ դասախոսությունների ժողովածու, Երևան,Արտագերս 2016:

8. https://multiurok.ru/files/integrvats-das-ew-dasi-plan.html

Հավելվածներ



METALS
E-WASTE
PLASTIC
ORGANIC
GLASS
PAPER

Ինչպես նվազեցնել պլաստիկի օգտագործումը

Պարզապես պլաստիկը փոխարինեք այլընտրանքով

Պլաստիկ շիշը	Ապակյա շշով
Մեկանգամյա օգտագործման սպասքը	Ապակյա, փայտյա, մետաղյա և այլ սպասքով
Պոլիէթիլենային տոպրակը	Կտորից պայուսակով
Ականջ մաքրելու պլաստիկից ձողերը	Փայտյա ձողերով
Օճառի պլաստիկից տարան	Ապակյա տարայով

Տեսակավորեք աղբը՝ առանձնացնելով վերամշակման ենթակա պլաստիկը, և հանձնեք այն վերամշակող կառույցների

Հորդորեք ընկերներին հետևել Ձեր օրինակին